

Հանջմունքից ստիպուած հրաւիրուած է մի խելացի և առաքինի դաստիարակ, և մի և նոյն ժամանակ պահանջուած է նորանից որ նա իւր պէս մտածէ, իւր պէս նստէ վեր կենայ, այսինքն իւր պէս տգէտ լինի:

Տղէտ հայրը ուրիշի օրինակէն թելադրված ուսման է տալիս իւր որդոյն. բայց որդին ուսման ճաշակը առնելէն զկնի ընդհատվում է հօր օժանդակութիւնը միմիայն նորա համար, որ որդին այլապէս սկսաւ մտածել: Տղէտ աղամարդը ցանկանում է ուսումնական և խելացի կին ունենալ, ոչ հասկանալով թէ ե՞նչ է ուսումը, այլ միայն անունի համար, որ ասեն այս ինչ մարդը ուսումնական կին ունի. բայց յետոյ սկսում է սահմանափակել նորա մարդկային բարի ձգտողութիւնքը և հարկադրում է վարուել նորան այնպէս, ինչպէս բոլոր տգէտ կանայք: Այսպիսի անհամար խոչընդակութիւններով լիքն է աշխարհս, բայց բոլորի աղբիւրը մի է՝ և այդ տգիտութիւնն է: Ուստի տգէտ և մոլի հասարակութեան մէջ ոչ միայն չէ առաքինացնում մարդու նորա մտաց զարգացումը, այլ և մոլիացնում է: Բայց երբ հետզհետէ սկսում է այդ մանանխոյ հատը աճիլ և սփռել իւր ճիւղները հասարակութեան բոլոր դասակարգերի մէջ, այնուհետև առաքինութիւնը յազթում է մոլութեանը, և սկսում է փողփողել երեքգունեան զրօշակը Ազգային և Բարոյական լուսաւորութեան, այն է՝ Հաւատոյ, Յուսոյ և Միտոյ...

(Շորոշիւն)

Վ. Աղայեանց

ԲԱՐԻ ՆԱԻԱՆՉ

Կուրծքի տակին բարախում է անդադար Այն, որ կոչի Բարի Նախնայ բարերար, Մինչ անհրաժեշտ ստիպում է եւ նորան Արիանալ, որ սպրում է անսատար:

Թէ ծուլութեան նիրհով կամի որ թմրիլ, Իսկոյն խթան նորա մտաց կը խոթէ, Մինչև ան ցանկայ հեշտեալ իւր կեանք անցանել, Կազդէ իրան, ասելով թէ ասո՛՞ծ է: Կը ձգէ վաղ նորա սիրտը մեծ եռանդ, Որով կառնէ այն պղերդին ջերմեռանդ, Հապա շուտով մանկական իսկ մտածմունք Նորա համար կընին ունայն եւ անյայտ: Գուցէ մէկը վառված սիրով Ազգային Կը կատարէ գործ արժանի օգտուէտ, Դա չի թողուլ այլոց անմասն բնաւին, Այլ կը ստիպէ օժանդակել իսկ յաւէտ: Կա երջանիկ կը համարուի, որ ունի Այդ բարիքը — այդ սիրելի նախանձը, Որով կարէ զայն ստանալ, գոր չունի, Եւ բարւորել իւր վիճակը, իւր անձը: Ո՞վ արդեօք ո՞վ չի համբերիլ նեղութեան, Որ կը սիրէ այդ առիթը բարութեան, Նորա համար սար, ծոր, ծով, ցամաք լայն... Քաղցր է յուզել նպատակին իւր միայն: Թէ տեսնէ յառաջադէմ վիճակում Չիւր ընկերն առաքինի խոհական, Կը համոզէ իրան եւս նոյն կարգում Հետեւիլ նորա ընթացքին ժրջան: Եթէ ունի բարի անուն իւր ընկեր, Կը յաւելու նորա սրտում զաղանի սէր, Յոր եւ ինքն կը ջանայ միշտ անհամբեր, Գտնել պատիւ — բարի անուն բարեբեր: Ծոյլ զաւակդ թող ուսանի նորա մօտ, Որ ունի եւ այդ նախանձը դովական, Եւ նրան կը բուրէ շոյտ արձնութեան հոտ, Որ կընթանայ շաւղօք ուսման պատուական: Բարի նախանձ, բեզ սուր դիտեմ քան զթուր, Որ կը վառես մարդոյ սիրտը որպէս հնր, Սակայն յետոյ երբ կը հասնի իւր ըզմին, Կզովացնես նայն իսկ սիրտը տալով ջուր: Ով բեզ չունի, բարիքներից գուրկ է նա, Եւ իւր օգուտն ո՞չ կարենայ դիտել նա, Այլ այնպիսին կարի թշուառ վիճակում Կը լինի միշտ, եւ անանուն իւր կեանքում: Եթէ մի ազգ, կամ որ քաղար բեզ չունի, Չէ կարելի ասել նրան թէ ունի Ամենայն ինչ բարեմասնեայ, գործ արժանի, Գործ ազգային — Գպրոց ասեմ կենդանի:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԻՐՉԱԲԷԿԷԱՆՅ:

Ի Շորոշիւն:

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷԶՄԻԱՍՆԻ